

Արձանագրություն թիվ 3

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2018թ Նոյեմբերի 21ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաղորդումը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:
3. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
4. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
5. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
6. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Գիտխորհրդի 13 անդամներից ներկա են 10-ը հետևաբար մեծամասնությունը ներկա է և կարող ենք սկսել խորհուրդը:

-Ըստ օրակարգի պետք է լսենք մեթոդ խորհրդի նախագահ Կ.Ռ.Գրիգորյանի ելույթը կատարած աշխատանքների մասին:

Ելույթ ունեցավ ք.գ.դ.,պրոֆ. Կ.Ռ.Գրիգորյանը (Ելույթն ամբողջական կցվում է)

Նա նշեց, որ բակալավրիատի և մագիստրատուրայի աշխատանքային պլանում առայժմ փոփոխություններ չեն արվել: Սակայն արտահերթ մեթոդ-խորհրդի նիստում պետք է քննարկվի՝

- Պլանում առաջարկություն կա մեկ փոփոխություն, որն պայմանավորված է "Սննդի արտադրական տեխնոլոգիաների" առարկայի հետ: Այս առարկան ժամանակացուցային գրաֆիկով պետք է տեղափոխել ավելի ուշ՝ ֆիզ.-կուլ. և

օրգանական քիմիա առարկաներն անցնելուց հետո: Այս առակայի յուրացման համար անհրաժեշտ է վերոնշյալ առարկաների իմացությունը:

- “Ընդհանուր Քիմիա” մասնագիտությամբ մագիստրոսական ծրագրի քննարկման և առաջարկման հարցը: Ակնհայտ է, որ այս ծրագրի ձևակերպման ընթացքում յուրաքնչյուր ամբիոն պետք է ունենա իր մասնաբաժինը և պետք է այն ներկայացվի հստակ:
- Բելոռուսիայի պետական համալսարանից ներկայացվել է “Քիմիա” մասնագիտացմամբ մագիստրատուրայի ԵՊՀ-ի հետ համատեղ երկու ծրագրերի նախագիծ՝

Ա) “Քիմիա” մագիստրատուրոսական ծրագիր 2 տարով, երբ ուսանողների ուսուցման գործընթացը առաջին տարին իրականացվում է ԵՊՀ-ում, իսկ երկրորդ տարին՝ ԲՊՀ-ում:

Բ) “Քիմիա” մագիստրոսական ծրագիր օտար լեզվով մեկ տարի տևողությամբ:

Պետք է մեթոդ-խորհրդի արտահերթ նիստում քննարկվի նաև այդ հարցը:

-Տ.Վ.Ղոչիկյան

-ԲՊՀ-ի կողմից ներկայացված երկու ծրագրերն էլ նախնական առաջարկներ են: Այդ ծրագրերը կյանքի կոչելու համար նախ պետք է կարգավորել առարկայական ցանկը, ներկայացնել ընդհանրական ծրագիր, որը միաժամանակ բավարարի և՛ մեր ուսումնական համակարգին, և՛ ԲՊՀ-համակարգին:

- Մեթոդ խորհրդի առաջնային խնդիրը՝ ներկայացնել մագիստրատուրայի ընհանրական նոր ծրագիր “Քիմիա” մասնագիտացմամբ: Այս աշխատանքը պետք է ավարտել մինչև տարվա վերջ:

2. Տ.Վ.Ղոչիկյան – Օրակարգի երկրորդ հարցը՝ ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Նուրգարյան

-Մեր ամբիոնում պարբերաբար իրականացվում են ինչպես գիտական սեմինարներ, որը պայմանավորված է թեկնածուական և դոկտորականատենախոսությունների քննարկման հետ, այնպես էլ մագիստրատուրայի երկրորդ կուրսում գիտամեթոդական սեմինարներ: Այս տարի մագիստրատուրայում

թեմաները ընտրել ենք ուսանողների նախապատվությամբ, և ուզում եմ ասել, որ ուսանողները նախապատվություն են տալիս սպեկտրներին. Այսինքն տալով անհայտ նյութի սպեկտրները՝ MASS, IR, ^1H ^{13}C , ուսանողը դասի ընթացքում կարողանում է տրված անալիզների միջոցով արտածել անհայտ նյութի քիմիական բանաձևը:

- Տ.Վ.Ղոչիկյան- Չեք փորձել այդ տվյալները տալ, որպես տնային առաջադրանք և ուսանողը հաջորդ դասին բերի պատասխանը: Այդ դեպքում դուք քննարկման համար ավելի շատ ժամանակ կունենաք:

-Ն.Ա.Դուրգարյան- Այդ փորձառությունը մենք ունենք, քանի որ նման տարբերակով աշխատել ենք անցած տարի: Սակայն դա արդյունավետ չէ, քանզի չես կարողանում հետևել նրանց տրամաբանության ընթացքին և ինքնուրույնության աստիճանին:

-Պրոֆեսոր Շ. Մարգարյան - Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ

-Սեմինարների ընթացքում մագիստրատուրայի ուսանողների հետ քննարկում ենք ֆիզիկական քիմիայի նորագույն մեթոդները, ինչպես նաև մեզ մոտ կատարված աշխատանքները: Ուսանողները սեմինարների ժամանակ առաջարկում են այդ աշխատանքների տրամաբանական շարունակությունը և հետագա զարգացման ուղիները:

-Տ.Վ.Ղոչիկյան – Նմանատիպ սեմինարներ վարել եք նաև նախորդ տարիներին . Դուք առաջընթաց նկատում ե՞ք: Ի՞նչ է տալիս ուսանողին այդ կարգի սեմինարները:

- Այո: Այդ սեմինարները հնարավորություն են տալիս ուսանողին ինքնուրույն աշխատել, մտածել և պատասխանատու լինել:

Դոցենտ – Ա.Բ.Մարտիրյան

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում մագիստրատուրայի բաժին չունենք:

3. Գիտլսորհրդի նախագահ – Տ.Վ.Ղոչիկյան

Այժմ քննարկենք ամբիոններում իրականացվող ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և կուրսային աշխատանքների ընթացքին

-Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան

Ամբիոնում նշված աշխատանքները ընթանում են նորմալ հունով, բոլոր աշխատանքների վերնագրերը և ղեկավարները հաստատված են: Խնդիրը կայանում

Է Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների հետ՝ առկա IV կուրսից երկու ուսանող իրենց ավարտական աշխատանքը պետք է անեն մեր ամբիոնում, սակայն գրանցվել է մեկ ուսանող, մագիստրոսական աշխատանք պետք է կատարի մեկ մագիստր՝ նա նույնպես չի ներկայացել: Հեռակա ուսուցմամբ ուսանողներից ևս 2 ուսանող չեն մոտեցել: Ֆարմացիայի ինստիտուտին տեղյակ է պահվել: Այժմ կուրսային աշխատանքներից: Կուրսային աշխատանքների պաշտպանությունը անցած տարվա նման կլինի ցուցադրական՝ քանզի այն ավելի արդյունավետ է : Նախատեսվում է այդ պատպանությունները իրականացնել դեկտեմբերի 15-ից հետո:

Ավարտական աշխատանքների վերնագրերը քննարկվել են ամբիոնի նիստում:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան

Ավարտական աշխատանքները ընթանում են իրենց հունով՝ «Քիմիա» բաժնի IV-կուրսի ուսանողները ներկայացել են, սկսել են իրենց աշխատանքները: Սննդի անվտանգություն բաժնից ունենք 2 մագիստրոս, նրանց աշխատանքները նույնպես ընթանում են նորմալ ընթացքով: Աշխատանքների նկատմամբ հետևողական եմ և բացթողումներ չեն լինի: Ֆարմացիայի ինստիտուտի հեռակա ուսուցմամբ V-կուրսի 5 ուսանողներից ներկայացել են 3-ը: Նրանց ղեկավարները և թեմաների վերնագրերը ֆիքսված են:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ-պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան Ամբիոնում նշված աշխատանքները ընթանում են նորմալ հունով, բոլոր աշխատանքների վերնագրերը և ղեկավարները հաստատված են:

4. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին: Քիմիայի ֆակուլտետում կուրատորական աշխատանքով զբաղվում են դոցենտ Ռ.Պ Մխիթարյանը և դոցենտ Ա.Ի.Մարտիրյանը: Աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիներին հանդիսավոր դիմավորելուց և ֆակուլտետը ներկայացնելուց հետո ծանոթացրել են ԵՊՀ-ի կանոնադրության և մասնաշենքերի հետ: Աշխատանքները շարունակվում են:

5.Պրոֆեսոր Տ.Վ.Ղռչիկյան

Օրակարգի ընթացիկ հարցի մեջ իրականացնելու ենք

Ա)Ասպիրանտի թեկնածուական ատենախոսության վերնագրի և ղեկավարի հաստատում

Բ) Ասպիրանտների ատեստավորում

Ա) Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Արեն Յուրիկի Ամիրբեկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել՝ «Լուծույթներում ակրիդինային ներկանյութերի սպեկտրաչափական առանձնահատկությունները և դրանց փոխազդեցությունները կենսամոլեկուլների հետ», և գիտական ղեկավար հաստատել պրոֆ. Շ.Ա.Մարգարյանը: Ամբիոնում այս հարցը քննարկվել և ընդունվել է: Խորհուրդը հաստատեց՝ ասպիրանտ Արեն Ամիրբեկյանի ատենախոսության վերնագիրը՝ «Լուծույթներում ակրիդինային ներկանյութերի սպեկտրաչափական առանձնահատկությունները և դրանց փոխազդեցությունները կենսամոլեկուլների հետ»: Ղեկավար հաստատեց պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանին:

Բ) Անօրգանական և անալիտիկ քիմիայի և ֆիզ.կոլ քիմիայի ամբիոններում իրականացվել է ասպիրանտների ատեստավորում: Լսվել է նրանց կատարած աշխատանքների հաշվետվությունը և տպագրված աշխատանքները: Ֆիզ.կոլ քիմիայի ամբիոնի ասպիրանտ Աշոտ Մխիթարյանը հանձնելու է մասնագիտական մինիմումի քննությունը և ներկայումս զբաղված է թեկնածուական ատենախոսության ձևակերպման հարցով: Մինչև այս ուսումնական տարվա վերջ կներկայացնի ավարտուն աշխատանքը: Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնից ատեստավորվելու է ասպիրանտ Մարիետա Զաքարյանը: Հաշվետու տարում Մ. Զաքարյանը իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ կատարված աշխատանքների հիման վրա տպագրվել է 3 գիտական հոդված, հինգ թեզիս և մասնակցել է երեք միջազգային գիտաժողովի, որոնցից երկուսում հանդես է եկել բանավոր զեկուցմամբ: Հանձնել է, որոշ ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, **որոնցից** համապատասխանաբար հավաքել է 20 և 15 կրեդիտ: Խորհուրդը հիմնվելով ամբիոնների կողմից տրված կարծիքներին երաշխավորեց ասպիրանտներ Աշոտ Մխիթարյանի և Մարիետա Զաքարյանի ատեստավորման գործընթացը:

Գ) Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրոսյանը ամբիոնից ներկայացնում է՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամը հայտարարում են գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի

աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» ՄՐՑՈՒՑԹ: Մրցույթին մասնակցելու համար դիմել է ք.գ.դ., դոցենտ Լ.Ռ.Հարությունյանը և ներկայացրել է հետևյալ վերնագրով թեման “Նոր ադսորբենտների մշակում բարձր կարգավորվածություն ունեցող մետաղասփիլկատների հիմքի վրա»: Ամբիոնում քննարկվել է հարցը և ամբիոնը խնդրում է երաշխավորել թեման մրցույթին մասնակցելու համար:

Գիտխորհուրդը որոշեց երաշխավորել թեմայի ֆինանսավորումը:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղուչիկյան

Մ.Ա.Սամվելյան